

ՏՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ՏՃԻ նոյեմբերի 2018թ.

քաղաք Երևան

2018 թվականի նոյեմբերի 6-ին, ժամը 16.00-ին տեղի ունեցավ ՏՀայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը: Հոգաբարձուների խորհրդի 26 անդամներից նիստին մասնակցում էին 20-ը:

Նիստը նախագահող՝ ՏՀայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք: Օրակարգի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի նոր խմբագրության հաստատում,
Ջեկուցող՝ Վ. Ուռուտյան
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի բյուջեի նախահաշվի փոփոխության քննարկում,
Ջեկուցող՝ Վ. Ուռուտյան
3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունների քննարկում և հաստատում,
Ջեկուցող՝ Վ. Ուռուտյան
4. Այլ հարցեր:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նյութերը նախապես տրամադրվել էին ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին:

Բացման խոսքով հանդես եկավ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնակատար Վ. Ուռուտյանը, ով խոսեց իր պաշտոնավարման ժամանակահատվածում կատարված բարեփոխումների, բացահայտված թերությունների և դրանց լուծման ուղիների մասին:

Նախագահող Արմեն Հարությունյանը քննարկման դրեց օրակարգի 1-ին՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի նոր խմբագրության հարցը: Պարզաբանումներով հանդես եկավ համալսարանի իրավախորհրդատու Նարեկ Եղիազարյանը:

Արտահայտվեցին հոգաբարձուների խորհրդի անդամներ Գոռ Խաչատրյանը, Գոհար Մամիկոնյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի նոր խմբագրության հաստատումը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի նոր խմբագրությունը (կցվում է):

Օրակարգի 2-րդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի բյուջեի նախահաշվի քննարկման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ռեկտորի պաշտոնակատար Վ. Ուռուտյանը:

ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնակատար Վ. Ուռուտյանը հանգամանորեն ներկայացրեց, որ օպտիմալացման շնորհիվ հնարավոր է եղել բարձրացնել համալսարանի աշխատակիցների աշխատավարձերը՝ 25%-ով կբարձրանա դասախոսական անձնակազմի (530 շահառու) և 10-15%-ով ուսումնաօժանդակ կազմի (170 շահառու) աշխատակիցների աշխատավարձերը:

Հարցի շուրջ արտահայտվեցին Արմեն Հարությունյանը, Գոհար Մամիկոնյանը, Գարիկ Սարգսյանը, Գոռ Խաչատրյանը:

Խորհուրդը ի գիտություն ընդունեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի բյուջեի նախահաշվի վերաբերյալ ռեկտորի պաշտոնակատարի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

Օրակարգի 3-րդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ռեկտորի պաշտոնակատար Վ. Ուռուտյանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին Արմեն Հարությունյանը, Գոռ Խաչատրյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունների հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0:

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունները (կցվում է):

Առաջին ընթացիկ հարցով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտորի պաշտոնակատար Վարդան Ուռուտյանը, ով ներկայացրեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ՀՀ կառավարության 28.12.2018 թ.-ի N1732-Ա որոշմամբ ՀԱԱՀ-ին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված Երևան քաղաքի Մյասնիկյան պող. 2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգման համար համաֆինանսավորում հայթաթելու նպատակով փորձում է ներգրավել գործընկերներ՝ հիմնանորոգումը միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելու համար: ՀԱԱՀ-ը, կարևորելով առաջավոր տեխնոլոգիաների և սարքավորումների կիրառումը, ուղղված է ներգաարդյունավետության ներուժի իրացմանը և էներգախնայող նորարարական մոդելների ներդրմանը, բանակցություններ է սկսել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ՝ համագործակցության եզրեր գտնելու ակնկալիքով:

Նշեց, որ նախնական համաձայնություն են ձեռք բերել համագործակցել ՄԱԶԾ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի շրջանակում (այսուհետև՝ «Ծրագիր»), որը աջակցում է գոյություն ունեցող հանրային նշանակության և բնակելի շենքերի ֆոնդում ցածրաձխածնային փորձնական-ցուցադրական նախագծերի իրականացմանը, ընդհանուր նպատակ ունենալով ցուցադրել շենքերի շահագործման ծախսերի զգալի նվազեցման հնարավորությունները համապատասխան ոլորտի քաղաքականության հիմնավորման և ներդրումների ֆինանսական ռիսկերի նվազեցման նպատակով մոնիթորինգի և ստուգման համակարգի ստեղծման համար:

Համագործակցության արդյունքում հնարավորություն կընձեռնվի ՀԱԱՀ-ին վերոնշյալ օբյեկտը վերանորոգել ՄԱԶԾ «Ծրագրի» համաֆինանսավորմամբ: Մասնավորապես, ՄԱԶԾ «Ծրագիրը» պատրաստակամություն է հայտնել իր հաշվին և իր միջոցներով վերանայել և տնտեսապես հիմնավորված չափով լրամշակել

օբյեկտի հիմնանորոգման բազային նախագիծը՝ հաշվի առնելով ՀՀ-ում գործող շենքերի ջերմային պաշտպանությանը վերաբերող շինարարական նորմերի և ստանդարտների պահանջները, ինչպես նաև միջազգային լավագույն փորձը, համաֆինանսավորել էներգախնայող տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված բաղադրիչները, կազմակերպել և իրականացնել նախագծերի լրամշակման, հիմնանորոգման, շինարարության տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության աշխատանքները ՀԱԱՀ-ի հետ համատեղ:

Միննուն ժամանակ շեշտվել է, որ ՄԱԶԳ «Ծրագիր» համաֆինանսավորում ստանալու համար կապալառուի ընտրության և հիմնանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն ՀԱԱՀ-ի միջև համաձայնեցված ժամանակացուցով՝ ՄԱԶԾ ընթացակարգերին համահունչ: Սա ենթադրում է, որ անհրաժեշտություն կառաջանա ՀՀ կառավարության կողմից ՀԱԱՀ-ին Երևան քաղաքի Մյասնիկյան պող. 2 հասցեում գտնվող շենքը վերանորոգելու համար հատկացված 150 մլն. դրամը և ՀԱԱՀ կողմից նույն շենքը վերանորոգելու համար ներդրվելիք գումարը փոխանցվի ՄԱԶԾ:

Խորհուրդը հանձնարարեց ռեկտորի պաշտոնակատար Վարդան Ուռուտյանին շարունակել բանակցությունները և հասնել ՄԱԶԾ-ի հետ մտադրությունների մասին հուշագիր ստորագրելուն՝ ֆինանսական և իրավական հարցերի վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարությունից համապատասխան ընթացակարգերի մասին ցուցումներ ստանալուց հետո:

Երկրորդ ընթացիկ հարցով հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը առաջարկեց նշանակել ռեկտորի ընտրության օր:

Խորհուրդը միաձայն որոշեց նշանակել ռեկտորի ընտրության օր՝ դեկտեմբերի 25-ին ժամը 11.00-ին: